

ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ Ժ—ԺԲ ԴԱՐԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ*

Թեև միջնադարյան որոշ պատմիչներ և նորագույն շրջանի բանասերներից մի քանիսը եգիպտահայոց առաջնորդներից ոմանց անվանել են պատրիարք կամ կաթողիկոս, պետք է նշել, որ նրանք չեն ունեցել կաթողիկոսական իրավասություններ (մեռոն օրհնել, եպիսկոպոս ձեռնադրել և այլն), այլ հանդիսացել են սոսկ եգիպտահայոց գաղթավայրի առաջնորդները: Եթե Ուռհայեցին և Անեցին գրում են Գրիգորիս Արքեպիսկոպոսի կաթողիկոս լինելու մասին, պետք է նշել, որ Գրիգորիսը Հայ Եկեղեցու կաթողիկոսների ոչ մի ցուցակում չի նշվել: Նկատի առնելով միջնադարյան այդ շրջանում Եգիպտոսի հեռավորությունը Հայաստանից և հայոց հոգևոր կենտրոններից, ինչպես նաև եգիպտահայ գաղութի արագ աճը, երևի Գրիգոր Վկայասեր Ամենայն Հայոց կաթողիկոսը Գրիգորիսին ձեռնադրելով եպիսկոպոս, տվել է նաև կաթողիկոսի անվանական տիտղոսը, պարզապես երկրի խալիֆայի, վեզիրի և կառավարության առջև ավելի բարձրացնելու հայոց առաջնորդի պատիվն ու անունը, քանի որ Եգիպտոսում ղպտիների մեծավորը պաշտոնական կերպով ճանաչված էր որպես պատրիարք: Նույն ձևով էլ պատմիչ Աբու Սալիհին Անանիային և վերջին անանուն առաջնորդին կոչել է պատրիարք, պարզապես երկրի ղպտի և հայ հոգևոր առաջնորդներին դնելով հավասար աստիճանի վրա, գոնե անվանական կերպով, քանի որ նրանք փաստացիորեն չունեին ո՛չ նույնանման պաշտոնները և ո՛չ էլ նույն պարտականությունները: Իսկ երկրի իշխող տարրն էլ՝ արաբները, չիմանալով այս նրբությունն և հավասար գետնի վրա դնելով Եգիպտոսի ղպտի պատրիարքին ու հայոց առաջնորդին, այս վերջնույն կոչել են պատրիարք: Սակայն միակ ճշգրիտ և ստույգ փաստն այն է, որ եգիպտահայերի հոգևոր ղեկավարներն եղել են պարզապես առաջնորդներ, եպիսկոպոսական աստիճանով, իսկ նրանցից ոմանք միայն եղել են արքեպիսկոպոս:

ԺԱ դարի վերջում եգիպտահայ գաղութի թիվը հասել է մոտավորապես երեսուն հազարի: Այս մասին առաջին անգամ նշել է պատմիչ Մատթեոս

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1993 թվականի Է—Ը միացյալ համարից:

Ռուհայեցին գրելով հետևյալը. «Եւ բազում զօրք ժողովեցան յԵգիպտոս իբրև երեսուն հազարաց»[53]: Անշուշտ խոսքը կռվող զորքի մասին չէր, քանի որ այդ ժամանակ Եգիպտոսի բանակն էլ երեսուն հազար զորք չուներ, այլ խոսքը վերաբերում էր Եգիպտոսի հայերին, որովհետև նախադասության շարունակությունում էլ խոսում էր հայերի մասին այսպես «և Տէր Գրիգորիս զկնի ժամանակաց ձեռնադրեաց կաթուղիկոս զՏէր Գրիգոր՝ զքուրորդին»[54]: Հետագա բոլոր պատմաբաններն ու բանասերները այս թիվը վերցնելով Ռուհայեցուց, գտնում են, որ ԺԱ—ԺԲ դարերում եգիպտահայերի թիվն եղել է երեսուն հազար:

Դրանց մեջ վերջերս միայն պատմաբան Հ. Թուրշյանն է, որ այդ ժամանակաշրջանի եգիպտահայերի թիվը հասցնում է հարյուր հազարի: Այսպես, նշելով Ռուհայեցու հիշած երեսուն հազարը, դրա վրա ավելացնում է Պահլավունիների Եգիպտոս բերած քսան հազար հոգուն, ինչպես նաև այդ երկիրն անկազմակերպ ձևով ներգաղթած հայերին և «98 տարիների (1074—1172 թթ.) բնական աճի հետ միասին եգիպտահայ գաղութի թիվը, այսպիսով, կազմում է մոտավորապես հարյուր հազար»[55]:

Հակառակ, որ հայկական այդ աղոթավայրերը ցիր ու ցան տարածված էին ամբողջ Եգիպտոսում, Նեղոս գետի երկարությամբ, մենք գտնում ենք, որ ԺԱ դարի վերջերին և ԺԲ դարի սկզբներին, երբ եգիպտահայ գաղութը քանակական տեսակետով հասել էր իր բարձրակետին, ամբողջ գաղթավայրի թիվը պետք է լիներ 50—60 հազար հայ բնակչություն: Աղազարմն ևս իր մի հոդվածում գտնում էր, որ հայերի թիվը ԺԲ դարում պետք է 30,000-ից ավելի մեծ լիներ[56]: Պարզ է, որ եգիպտահայերի մեծ մասը կենտրոնացած էր մեծ քաղաքներում և կենտրոններում, ինչպես՝ Կահիրե, Աղեքսանդրիա, Թեբե, Իթֆիհ և այլն, որտեղ էին հայկական գլխավոր վանքերն ու եկեղեցիները, իսկ երկրորդական բնակավայրերում, ինչպես ավաններում ու գյուղերում, կային միայն փոքր չափի աղոթավայրեր՝ այսինքն մատուռներ և այլոց եկեղեցիներում աղոթքի առանձին սեղաններ:

Եգիպտոսում քիչ հայեր կային Ժ դարի սկզբում, որոնց թիվն աճում էր կամաց-կամաց: Նրանց կարևոր մասը պատկանում էր առևտրական դասակարգին: Պետք էր Էլ-Ջեմալի հայազգի վեզիրի ժամանումն Եգիպտոս, որ շրջադարձային եղավ տեղվույն հայկական գաղութի համար: Հայերի հոսքը և քանակն օր ըստ օրե ավելացավ երկրում: Գալիս էին գյուղացիներ և քաղաքացիներ, շինականներ և արհեստավորներ, ինչպես նաև կյանքի զանազան ասպարեզներում գործող հայ մարդիկ ընկերացած իրենց ընտանիքներով: Գալիս էին նրանք մեծ և փոքր խմբերով: Հայերի ներհոսը դեպի Եգիպտոս շարունակվեց և ուժեղ թափ ստացավ Բեդրի (1074—1094) և իր որդու՝ Աֆդալի (1094—1121) վեզիրության 47 տարիների ընթացքում: Աֆդալի սպանությամբ ներգաղթի թափը կոտրվեց և այս անգամ գալիս էին պատահական մարդիկ միայն, այն էլ քիչ թվով: Պատճառն այն է, որ շուրջ

---

[53] **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 211:

[54] Նույն տեղում:

[55] Արևելագիտական ժողովածու, № 2, Երևան. 1964, տեսնել Հ. Թուրշյանի հոդվածը «ԺԱ և ԺԲ դարերի եգիպտահայ գաղութի պատմությունից», էջ 315:

[56] **Սուրէն Պարթևեան**, Եգիպտահայ տարեցոյցը, Ա տարի, Գահիրէ, 1914: Տեսնել Ն. Աղազարմի հոդվածը «Եգիպտահայ գաղութը (պատմական և վիճակագրական ակնարկ)», էջ 21:

ԱՄՐՈՑԻ ԷԼ-ՋՈՒԵՅԼԱ ԴՈՒՌԸ, ԿԱՀԻՐԵ, 1091 թ.
(ԳՈՐԾ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ)



ԱՄՐՈՑԻ ԷԼ-ՋՈՒԵՅԼԱ ԴՈՒՌԸ, ԿԱՀԻՐԵ, 1091 թ.
(ԳՈՐԾ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ)



ԱՄՐՈՑԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԴՈՒՌԸ, ԿԱՀԻՐԵ, 1087 թ.
(ԳՈՐԾ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ)



ԽԱՉՔԱՐ
ԹՎԱԿԱՆԸ՝ 1749 թ.



ԽԱՉՔԱՐ
ԹՎԱԿԱՆԸ՝ 981 թ.



12-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔ՝ ԴԵՅՐ ԷԼ-ԱԲԻԱԴ
ՎԵՐԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՍՈՀԱԿ ՔԱՂԱՔԻ ՄՈՏԵՐԸ (ՍՊԻՏԱԿ ՎԱՆՔ)

կեսդարյա, ծագումով երկու հայազգի վեզիրների տիրապետությունն երկրում առաջացրել էր որոշ հակահայկական հոսանք և խմորումներ, ինչպես նաև նախանձ և վրեժխնդրություն երկրի հայերի նկատմամբ, որոնցից շատերը բարձր պաշտոններ էին զբաղեցնում պետական-քաղաքական կառավարման մարմիններում: Վեզիր Աֆդալի սպանության ժամանակ նրան նույնիսկ «շուն հայ» էին անվանել, հակառակ, որ նա մաքուր իսլամ էր կրոնով, արաբախոս՝ լեզվով և երկար պայքարել քրիստոնյա խաչակիրների դեմ: Աղազարմը գտնում է, որ ֆաթիմյանների ժամանակ Եգիպտոսի պետական բարձր պաշտոններ ունեցող հայերի թիվը շատ մեծ է եղել: Նույնիսկ երկրի բանակում կային զուտ հայերից բաղկացած հետևակային և ձիավոր գնդեր, որոնց հրամանատարներն էին շատ հաճախ հայեր[57]:

Եգիպտահայ գաղութի համար փայլուն մի շրջան հանդիսացավ նաև երկրի քրիստոնյա նախարարապետ Վահրամ Պահլավունու կարճատև վեզիրության (1135—7 թթ.) ժամանակաշրջանը, որի Կահիրեից անփառունակ փախստից հետո երկրի նոր վեզիրը՝ Ռոդովանը, սկսեց հալածել հայերին և պաշտոնից հեռացնել կառավարական մարմիններում աշխատողներին: Վերջապես շատ իրավամբ Աղազարմը գտնում է, որ ֆաթիմյանների անկումով հայոց համար սկսվեցին ծանր օրեր: Եգիպտոսից արտաքսվեցին բոլոր հայ մեծամեծները: Երկրում մնացող հայերն էլ խիստ հալածանքի ենթարկվեցին և մեծ մասն էլ արտագաղթեց ուրիշ երկրներ և կամ տեղական տարրի, ավելի ճիշտ ղպտիների հետ ձուլվեց, այնպես, որ Եգիպտոսում մնացին քիչ թվով հայեր[58], մյուսներն անցան Պաղեստին, Սիրիա, հեռավոր Հաբեշստան և այլ երկրներ:

Ֆաթիմյանների երկրորդ հարյուրամյակն այնպիսի մի շրջան հանդիսացավ, որ Եգիպտոսի անունն ավելի բարձր հնչեց մերձավոր արևելյան երկրներում, և եգիպտահայերը հասան ավելի բարգավաճ աստիճանի: Այս պատճառով հարևան և այլ հեռավոր երկրներից Եգիպտոս այցելող մարդկանց մեջ կային նաև հայեր, որոնք գալիս էին առավելապես առևտրի նպատակով: Սակայն, բացի այդ, կային նաև ուրիշներ, որոնք գալիս էին զանազան պաշտոնական հանգամանքներով և գործերն վերջացնելուց հետո վերադառնում էին իրենց երկիրը: Այսպես, օրինակ, Երուսաղեմի հայոց պատրիարքը՝ Եսայի Ա 1137 թվին գնում է Եգիպտոս, այնտեղի հայկական շրջանակներում դրամ հավաքելու նպատակով, Երուսաղեմի հայոց վանքի կարիքների համար[59]:

Ֆրանսիացի Աբբա Մարտենը հետաքրքիր մի դրվագ է պատմում այս հայ պատրիարքի մասին, ցույց տալով միևնույն ժամանակ վեզիր Վահրամ Պահլավունու ունեցած մեծ ազդեցությունը օրվա խալիֆայի վրա: Խաչակրաց շարժման առաջին իշխաններից մեկը՝ Ջեոֆրին գերի է մնացել արաբների ձեռքը շուրջ 33 տարի: Երկարատև այդ ժամանակաշրջանում իր հարազատների և Երուսաղեմի ֆրանկ թագավորների բոլոր ճիգերը արաբական գերությունից ազատելու համար եվրոպացի այս իշխանին, մնացել են անարդյունք: 1137 թ. երբ Եսայի Ա պատրաստվում էր Երուսաղեմից գնալ Կահիրե, իր Աթոռին ի նպաստ հանգանակություն կատարելու նպատակով, Երուսաղեմի խաչակիրներն և Ջեոֆրիի հարազատները դիմում են և խընդ-

---

57 Նույն տեղում, էջ 6:

58 Նույն տեղում:

59 **Մ. Աղաւնունի**, Միաբանք և այցելուք հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, էջ 128:

րում հայոց պատրիարքին, որպեսզի միջնորդի Եգիպտոսի խալիֆայի և իշխանության մոտ, 33-ամյա գերությունից ազատելու համար այդ ֆրանկ իշխանին: Այս կարևոր առաքելության մեջ հաջողելու դեպքում, նրանք խոստանում են Երուսաղեմի հայերին նվիրել մի գյուղ: Թվում է, թե այդ գյուղը պետք է լինի կամ Ադեսիե, և կամ Բեյթ-Արիֆ գյուղը: Եսայի Պատրիարքը 1137 թ.[60] գալով Կահիրե բարեխոսել է Եգիպտոսի վեզիր և իր հայրենակից Վահրամ Պահլավունուն, իսկ այս վերջինս էլ Էլ-Հաֆիզ խալիֆային, որի սիրելին ու վստահելին էր Վահրամը: Խալիֆան, ընդառաջելով հայոց պատրիարքի և հայ վեզիրի միջնորդության, երկարատև գերությունից ազատել է Զեոֆրիին, ի մեծ ուրախություն իր հարազատներին և Երուսաղեմի ֆրանկ թագավորության: Աբբա Մարտեն այս ստույգ տվյալները վերցրել է Լիոն քաղաքի գրադարանում գտնվող ԺԲ դարի մի ձեռագրի հիշատակարանից[61]:

Եվսեբիոս Ռենոդիոսը գրում է, որ 1187 թ. Եգիպտոս է եկել մի հայ եպիսկոպոս, Սալահեդդին սուլթանի և Մուսուլի Սեյֆեդդին Ղազի իշխանի դիվանագետների հետ: Այս սուլթանի հրամանով հայերին է վերադարձվել Զուհրայի և Բուսթանիի երկու եկեղեցիները, որոնք նախապես ղպտիները գրավել էին հայերից[62]: Սա այն եպիսկոպոսն է ապահովաբար, որի մասին գրում է Աբու Սալիհը, որ 1177 թվականից հետո, երեք հայ քահանաների ընկերակցությամբ, գնացել է Եգիպտոս, ուղարկված լինելով Կիլիկիայի թագավորի և Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից հատուկ գրերով, վերըստին ձեռք բերելու համար Էզ-Զուհրիի և Էլ-Բուսթանիի երկու եկեղեցիները: Եպիսկոպոսն իջևանել է Հարեթ Էլ-Զուելայի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում և խնդիր է ունեցել Ֆաքիհ Էլ-Թուսիի հետ, մի քանի ամիս ապրել է այնտեղ, ապա հիվանդացել և մահացել այդ եկեղեցում, առանց իր նպատակին հասնելու: Ապա նրան թաղել են Էզ-Զուհրիի հայոց եկեղեցում, ինչպես գրում է հայազգի պատմիչը[63]: Ա. Բաթլերը գտնում է, որ հայոց թագավորը պետք է Լևոն Բ-ն լիներ: Այսինքն պետք է պատահած լիներ 1186 թվականից հետո, երբ գահակալեց Լևոն Բ-ն[64]:

Մրսրլյանն ևս գտնում է, որ հոգևորականների այս պատգամավորությունն Եգիպտոս է եկել մոտավորապես 1186 թ.[65]:

Եգիպտոս է այցելել նաև միջնադարյան անվանի հայ հոգևորական գործիչ և մատենագիր Ներսես Լամբրոնացին[66] (1153—1198 թթ.), որ քրոջորդին էր Կաթողիկոս Ներսես Շնորհալուն և մոտ ազգականն Եգիպտոսի վեզիր Վահրամ Պահլավունու: Լամբրոնացին 22 տարեկան հասակում (1175 թ.) Գրիգոր Տղա Կաթողիկոսից ձեռնադրվեց (Տարոնի) եպիսկո-

---

[60] Աբբա Մարտեն 1138 թ. է գրել, ապահովաբար նա սխալվում է, քանի որ այս թվականին արդեն Վահրամը վեզիր չէր և հեռացել էր այդ պաշտոնից:

[61] Journal Asiatique, Huitième Série, Tome XII, Paris 1888 (Juillet-Décembre), pp. 487—490. Les premiers princes croisés et les syriens Jacobites de Jérucalem, par M. L'Abbé Martin.

[62] **Eusebius Renaudotius**, p. 553.

[63] The Churches & Monasteries of Egypt..., pp. 10—11.

[64] Նույն տեղում, էջ 10 (տողատակի ծանոթագրություն):

[65] **Գ. Մրսրլեան**, Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, Գահիրէ, 1947, էջ 158:

[66] «Սիոն» ամսագիր. Երուսաղէմ, Յուլիս 1947 թ., էջ 275, տեսնել «Ներսէս Լամբրոնացի» հոդվածը:

պոս և ապա նշանակվեց վանահայր Սկևռա վանքի[67]: Մեզ թվում է, թե Լամբրոնացին Եգիպտոս է այցելել 1175—1198 թթ. ժամանակահատվածում, Էյուբյան հարստության սկզբնական շրջանում:

Այս ընթացքում անպաշտոն և պաշտոնական հայազգի բազմաթիվ մարդիկ են այցելել Եգիպտոս: Միաժամանակ եգիպտահայ գաղթօջախներից էլ առևտրականներ և այլ անձինք այցելել են հարևան երկրներն առևտրի և այլ նպատակների համար: Ամեն տարի գարնանը, Ս. Զատկի տոնին, եգիպտահայ գաղութից ուխտավորներ այցելել են Երուսաղեմ, եկեղեցական արարողություններին և տոնական հանդեսներին ներկա լինելու համար:

Այժմ տեսնենք, թե Ժ—ԺԲ դարերում եգիպտահայ գաղթօջախներն որտե՞ղ էին ափռված, երկրի ո՞ր քաղաքներում և ո՞ր գյուղերում, և այդ բնակավայրերում ազգային-եկեղեցական ի՞նչ հաստատություններ ունեին նրանք: Նախ նշենք, որ Ժ—ԺԲ դարերում գաղութի ազգային գիտակցական կյանքն ու գործունեությունը կենտրոնացած է եղել տեղի աղոթավայրերի շուրջը: Ավելի քան երկհազարամյա պատմություն ունեցող եգիպտահայ գաղութն ամենաշատ աղոթավայրեր ունեցել է ֆաթիմյան շրջանի երկրորդ կեսում, երբ երկրի վեզիրների մեծագույն մասը հայկական ծագում է ունեցել: Այս հանգամանքը մեծապես նպաստել է հայերի գաղթին դեպի Եգիպտոս: Հայերն ունեին վանքեր, եկեղեցիներ, մատուռներ և քրիստոնյա այլ օտարազգի համայնքներին պատկանող եկեղեցիներում պատարագի սեղաններ: Այս մասին միակ և վստահելի սկզբնաղբյուրն է արաբերեն գրող հայազգի Աբու Սալիհը, որ ապրել է ԺԲ—ԺԳ դարերում և որպես ականատես, տեսել է դրանց մեծ մասը, և շատ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում միջնադարյան Եգիպտոսում գտնվող ու գործող հայկական վանքերի և եկեղեցիների մասին: Հեղինակն իր արժեքավոր աշխատանքում խոսում է նաև Եգիպտոսի ղպտի, հաբեշ, ասորի և այլ քրիստոնյա համայնքների, ինչպես նաև հարևան որոշ երկրներում եղած եկեղեցիների և սրբավայրերի մասին:

Պետք է ճշտել այստեղ, որ ոչ ընդհանրապես, սակայն առհասարակ Եգիպտոսում եղող հայկական վանքերն ու եկեղեցիները գործել են երկրի մեծագույն քաղաքներում և բնակավայրերում, որտեղ ավելի հոծ թվով էին ապրում հայերը, իսկ մատուռներն ու պատարագի առանձին սեղանները գտնվում էին ավելի գյուղերում և այն բնակավայրերում, որտեղ հայերի քանակն ավելի նոսր էր և նրանք կարիքն ու պահանջը չէին զգում եկեղեցի ունենալու: Միջնադարյան հայ և արաբ պատմիչներն երբեք չեն նշել, թե Եգիպտոսի հայաբնակ վայրերում որքան հայեր են ապրել: Ըստ աղոթավայրերի, մենք կարող ենք որոշ չափով (ոչ ճշգրիտ կերպով սակայն) պատկերացում ունենալ հայ համայնքի տեղաբաշխման և այդ բնակավայրերում նրանց քանակի շատ ու քիչ լինելու մասին: Սա մի կարևոր հարց է գաղութի պատմությունն ուսումնասիրողների համար:

Աբու Սալիհ պատմիչի աշխատանքը լավագույն և վստահելի աղբյուրն է ճշտելու եգիպտահայ համայնքների բնակավայրերն ու սրբատեղիները: Սակայն այս ձեռագիրն ունի իր մեծ թերությունը: Այդ այն է, որ ձեռագիր բնագրի սկզբի 22 թերթերը ժամանակին թափած լինելու պատճառով մեր իմացությունը

---

67 **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հատոր Գ, Երևան, 1948, էջ 47, «Ներսէս Լամբրոնացի»:

եգիպտահայերի մասին թերի է, քանի որ բանասերները իրավամբ գտնում են, որ կորած թերթերը տալիս էին թանկարժեք տեղեկություններ եգիպտահայոց մասին, որոնք դժբախտաբար առհավետ կորել են: Աբու Սալիհը այս ձեռագրում խոսում է երկրորդական և այլ եկեղեցիների մասին, սակայն խոսք չկա առաջնային կարևորություն ունեցող մի քանի աղոթավայրերի վերաբերյալ, որով բանասերները հանգում են այն եզրակացության, որ հեղինակը դրանց մասին անդրադարձել է սկզբնական ձեռագրի կորած առաջին 22 թերթերում: Այս մեծ բացը փակելու համար, հայտնի արաբագետ Գ. Մըսրլյանն աշխատել է որոշ հավելվածական տեղեկություններ վերցնել ԺԵ դարի արժանահավատ արաբ պատմիչ Մաքրիզիից: Մենք էլ հետևելով նույն օրինակին և համեմատելով Աբու Սալիհի և Մաքրիզիի գրածները, ինչպես նաև Ալիշանի և Մըսրլյանի գործերը, ջանացել ենք վերականգնել գլխավորապես ԺԱ—ԺԲ, ինչպես նաև ԺԳ—ԺԵ դարերի եգիպտահայ սրբատեղիների ընդհանուր ցուցակը, որքան որ հնարավոր է եղել մեր համեստ ուժերով:

Այժմ թվենք միջնադարյան եգիպտահայ աղոթավայրերի ցուցակը, տալով յուրաքանչյուրի մասին կարևոր տեղեկություններ միայն՝ անունը, վայրը, թվականը և այլն:

1. Աբու Սալիհն իր ձեռագրի պահպանված հենց առաջին պարբերության մեջ խոսում է 1168—69 թթ. վերաշինված **Ս. Հակոբ** հայկական եկեղեցու մասին, որ գտնվում էր Կահիրեի Էլ-Բասաթին (Այգեստան) թաղամասում[68]:

2. Այդ նույն թվականին Կահիրեի Հարեթ Էլ-Զուելա թաղի Անբիծ Տիրամոր եկեղեցու երկրորդ հարկում գտնվող **Ս. Հովհաննես Մկրտիչ** եկեղեցին հատկացվել է հայերին: 1168—69 թթ. այստեղ է ապրել հայոց պատրիարքը, ինչպես գրում է Աբու Սալիհը, այսինքն Իթֆիհի նախկին եպիսկոպոսը, որ հետագայում դարձել է եգիպտահայոց առաջնորդը, որի անունն անհայտ է[69]:

3—4. Կիլիկիայից եկած հայ եպիսկոպոսը 1186 թ. ղպտիներից ետ է պահանջել Զուհրիի և Էլ-Բուսթանի հայկական երկու եկեղեցիները, որոնց մասին խոսվեց քիչ վերևում: Ըստ երևույթին այս երկրորդ եկեղեցին Այգեստանի Ս. Հակոբ եկեղեցուց տարբեր պետք է լիներ, որովհետև այս վերջինս արդեն 1168—69 թվականներից հայերի սեփականություն էր, մինչդեռ Էլ-Բուսթանի մյուս եկեղեցին ետ էր պահանջվում 1186 թ., շուրջ 18 տարի հետո[70]:

5. Կահիրեի Դեյր Էլ-Խանդակ թաղում նախապես կար **Ս. Գևորգ** անունով մի եկեղեցի, ինչպես գրում է Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակյանը, որ 1084-ի ատենները առաջնորդ Գրիգորիս Արքեպիսկոպոսի խնդրանքով Բեդր Էլ-Ջեմալի վեզիրը ղպտիներին կարգադրել է այն տալ հայերին: Վերջիններս ստանալով այս եկեղեցին, ընդարձակել են այն և գրեթե կրկին վերաշինել: Ասվում է, թե այն նշանավոր է եղել իր ժամանակին, այստեղ կատարված հրաշագործություններով[71]: Աբու Սալիհը գրում է, թե այս եկեղեցում է թաղված Նուբիայի քրիստոնյա Սողոմոն թագավորը, իսկ Իբն

---

68 The Churches & Monasteries of Egypt..., p 1.

69 Նույն տեղում, էջ 3:

70 Նույն տեղում, էջ 10—11:

71 **Թ. Արք. Գուշակեան,** Եգիպտոսի հայոց հին և արդի եկեղեցիներ, էջ 12—13:

Մույեսաերն էլ վկայում է, թե նույն եկեղեցում է թաղված Եգիպտոսի հայազգի վեզիր Վահրամ Պահլավունին[72]: Մըսրլյանն եզրակացնում է, որ 1084 թ. խարխուլ հիշյալ եկեղեցին տրված է եղել հայերին, իսկ 1169 թ. պետք է վերադարձված լիներ իր նախկին տերերին՝ ղպտիներին, քանի որ Աբու Սալիհը այն չի հիշում այլևս որպես հայերի սեփականություն: Երևի եկեղեցին դադարել է գոյություն ունենալուց մինչև ԺԵ դարը, քանի որ Մաքրիզին այն չի հիշում բոլորովին[73]:

6. Կահիրեի Հարեթ Էլ-Զուելա թաղամասում կար Անբիծ Տիրամոր անվան նվիրված մի եկեղեցի[74], որի վրա՝ երկրորդ հարկում էր գտնվում **Ս. Հովհաննես Մկրտիչ** եկեղեցին: Միջնադարում սովորություն կար ունենալ երկհարկանի եկեղեցիներ, մեկը մյուսի վրա, տարբեր անուններով, փաստորեն երկու տարբեր եկեղեցիներ, մի քանիսը դեռ պահպանվել են Եգիպտոսում:

7—8. Կահիրեի Այգեստան հայաբնակ թաղամասից շուրջ երեք կիլոմետր հեռու, Նեղոս գետի աջ ափին, գտնվում էին **Ս. Գևորգի** անվան նվիրված եկեղեցին և նույնանուն վանքը: Եկեղեցին փոքր էր, երբ առաջ պատկանում էր ղպտիներին, սակայն երբ Գրիգոր Վկայասեր Կաթողիկոսը Եգիպտոս եկավ և Բեդր Էլ-Ջեմալիի միջոցով հայերը գրավեցին այն և կառուցեցին նոր և շատ ավելի մեծ մի եկեղեցի, բազմաթիվ գմբեթներով: Հետագայում երբ դժբախտ դեպքեր պատահեցին հայերին, այդ նորակառույցը դարձյալ վերադարձվեց ղպտիներին: Աբու Սալիհը գրում է, որ մի ուրիշ ձեռագրում հիշում է, թե Թուրայում մի վանք է եղել **Ս. Գևորգ** անունով, որը 1164 թ. հայերից ղպտիների ձեռքն է անցել: Հայկական այս վանքը ունեցել է աշտարակ, ջրաղաց և պարտեզ, սակայն երբ հայերը 1204 թ. հեռացել են այդ վայրից, Ս. Գևորգ վանքն ևս ունեցել է ղպտիների ձեռքը[75]:

9. Մաքրիզու գրածից պարզվում է, որ Կահիրեից դուրս, դեպի Մըսր տանող ճամփի վրա, հողակույտերի մեջտեղ կար մի եկեղեցի **Ս. Մինաս** անունով: Ավելի ճիշտ սա սահմանակից երեք եկեղեցիների մի համալիր էր, որոնցից առաջինը պատկանում էր ղպտիներին, երկրորդը՝ ասորիներին, իսկ երրորդն էլ՝ հայերին[76]:

10. Վերոհիշյալից բացի հիշված է նաև մի մատուռ **Ս. Մինաս** անունով, որի մոտակա բլուրների վրա, որոնք մինչև այսօր Քոմ Էլ-Էրմեն (հայոց բլուր կամ հողակույտ) են կոչում: ԺԴ դարում Կիլիկիայից բերված հայ գերիները այստեղ բնակություն էին հաստատել: Մաքրիզին երկրորդում է վերոհիշյալը, գրելով, որ 1343-ին հայ և ֆրանկ գերիներ են բնակություն հաստատել Մըսրի հողաբլուրների վրա: Ըստ երևույթին, ինչպես Մըսըրլյանն է գրում, այդ բլուրների մոտ «հաստատված հայ խլյակների խնդրանքին վրա ղպտիների ընդարձակ» վանքից մի մատուռ իր հարակից հողամասով տրված է եղել հայերին ԺԵ դարում և գուցե ավելի շուտ[77]:

---

72 **Գ. Մըսրլեան,** Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, էջ 160:

73 Նույն տեղում, էջ 161:

74 **Թ. Արք. Գուշակեան,** Եգիպտոսի հայոց հին և արդի եկեղեցիներ, էջ 13: **Գ. Մըսրլեան,** Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, էջ 149:

75 **Գ. Մըսրլեան,** Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, էջ 163—4: The Churches & Monasteries of Egypt..., pp. 143—4.

76 **Գ. Մըսրլեան,** նույն տեղում, էջ 165:

77 Նույն տեղում, էջ 166—7:

11. Աբու Սալիհը գրում է, որ Իթֆիհի վիճակում կային յոթ եկեղեցիներ, որոնցից վեցը պատկանում էին ղպտիներին, իսկ յոթերորդն էլ հայերին: Այս վերջիններիս եկեղեցին նվիրված էր Ս. Գևորգի անվան[78]: Հավանաբար Իթֆիհում հայերն ունեին կարևոր մի համայնք, որովհետև, ինչպես տեսանք վերևում, այս եկեղեցին և տեղվույն հայկական համայնքն ունեին եպիսկոպոսական աստիճանով իրենց հոգևոր ղեկավարը, որ հետագայում դարձավ եգիպտահայերի առաջնորդը, նույնիսկ ոմանց կողմից պատրիարք ճանաչվելով, և որ հետագայում, քաղաքական դեպքերի բերումով, մեկնեց Երուսաղեմ և վախճանվեց այնտեղ շուրջ 80-ամյա տարիքում:

12. Վերին Եգիպտոսի Էլ-Մարաղադ վիճակում գտնվող Քալուսանա գյուղում ղպտիներն ունեին մի եկեղեցի: Այստեղ հայերն էլ ունեին մի եկեղեցի, որի անունը Աբու Սալիհը չի հիշում[79]:

Վերին Եգիպտոսում, Նեղոսի արևմտյան ափին, Մինիայի նահանգում, Ֆաշնի դիմաց, կար Շինարա վիճակը, որ գոյություն ունի մինչև այսօր, որտեղ ըստ երևույթին հայերն ունեին բավականին հոծ և կարևոր մի համայնք, ուր համաձայն Աբու Սալիհի տված տեղեկության, հայերն ունեին յոթ եկեղեցի (սակայն անմիջապես թվարկում է ութ անուն: Մեզ թվում է, թե այս սխալն առաջացել է ձեռագրի արտագրող գրիչի կողմից—Ն. Տ. Մ.):

Ստորև ներկայացնում ենք այդ ութ եկեղեցիների անունները.

13. Տիրուհու և Անարատ Կույս **Մարիամի** եկեղեցին:

14. Փառավորյալ **Միքայել** հրեշտակապետի եկեղեցին:

15—16. **Սուրբ Մաքսիմոսի** անվան եկեղեցի:

17—18. **Գաբրիել հրեշտակապետի** անվան երկու եկեղեցի:

19. **Բասդիտարի** անվան եկեղեցին:

20. **Սուրբ Գևորգ** փառավորյալ վկայի անվան եկեղեցին[80]:

Այժմ քննենք Շինարայի այս ութ եկեղեցիների հարցը: Ալիշանը հարցականի տակ է դնում Բասդիտարի անունը գրելով. «անունն և իսկ անծանոթ է մեզ»[81], իսկ արաբագետ Մըսրլյանն ավելի խորը կերպով ուսումնասիրելով Շինարայի պարագան, նախ գտնում է, որ Էվեց արաբերենից անգլերեն թարգմանության մեջ որոշ թյուրիմացության մեջ է ընկել, որ այդ յոթ կամ ութ եկեղեցիները հայկական լինեին: «Շատ ալ տրամաբանական չենք գտներ,—գրում է Մըսրլյանը,—որ ԺԲ դարի եգիպտահայ գաղութը «քահանաներով և ժողովրդով բարգավաճ յոթ եկեղեցիներ» ունեցած ըլլա Շինարայի պես գյուղի մը մեջ, երբ այդ թվով եկեղեցի չէ ունեցած նույնիսկ Կահիրեի կամ Մըսրի մեջ»[82]:

Այս ութ եկեղեցիներից գոնե երեքի անունները մեզ համար տարակուսելի են թվում: Հայերը չունեն Մաքսիմոսի (2 հատ) և Բասդիտարի անվան եկեղեցիներ: Ապա և տարակուսելի է, թե ինչո՞ւ Շինարայի նման փոքր և երկրորդական մի ավանում պետք է լինեին երկու եկեղեցի Ս. Մաքսիմոսի և երկուսն էլ Գաբրիել հրեշտակապետի անվան նվիրված: Այստե-

---

[78] Նույն տեղում, էջ 168: The Churches & Monasteries of Egypt..., pp. 162—3.

[79] **Գ. Մըսրլեան,** Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, էջ 169: The Churches & Monas teries of Egypt..., p. 255.

[80] The Chuches & Monasteries of Egypt..., p. 255

[81] **Ղ. Ալիշան,** Աբուսահլ հայ, Պատմութիւն եկեղեցեաց..., էջ 55:

[82] **Գ. Մըսրլեան,** Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, էջ 169:

ղից էլ որոշ կասկած է առաջանում մեր մեջ: Կամ այն այս ութ եկեղեցիների մի մասը ղպտիներին էր պատկանում (որով Աբու Սալիհը սխալ տեղեկություն է հաղորդում—Ն. Տ. Մ.), և կամ ղպտիներն արտագաղթել են և Շինարայի այս եկեղեցիներն անցել են հայերի ձեռքը, որոնք հետագայում ևս պահել են ղպտի աղոթավայրի սկզբնական անունները:

Աբու Սալիհի էվեցյան թարգմանությունից վերցնելով Ալիշանն այսպես է թարգմանել. «Շինարա վիճակին մեջ հայոց քրիստոնեից գաղթականյան մի հաստատված էր, որք յոթն եկեղեցի ունեին, շատ բարեկարգ, քահանաներով և միաբաններով»[83]: Արաբերենի հմուտ Մըսրլյանը գտնում է, որ այս նախադասությունը սխալ է թարգմանված բնագրից և տալիս է ճիշտ թարգմանությունը այսպես. «Շինարա կոչված վիճակը, որ իբր ավատ տրված էր քրիստոնյա հայերու միաբանության մը, կպարունակե քահանաներով և ժողովրդով բարգավաճ յոթ եկեղեցիներ»[84]: Այս թարգմանությունը ճշտելուց հետո, Մըսրլյանը գտնում է, որ կասկածելի է այդ յոթ եկեղեցիների հայերին պատկանելությունը, քանի որ «վիճակի մը ավատատեր դառնալ՝ այդ վիճակի եկեղեցիներուն ալ տիրանալ չի նշանակեր անպայման»[85]:

Համենայն դեպս, հակառակ որոշ կասկածների, մենք հարկադրված ենք ցուցակում տալու Շինարայի այս ութ եկեղեցիները, քանի որ Աբու Սալիհին նկատում ենք այդ ժամանակաշրջանի միակ և ամենավստահելի սկզբնաղբյուրն Եգիպտոսի եկեղեցիների վերաբերյալ:

21—23. Աբու Սալիհը գրում է, որ Վերին Եգիպտոսի Ասիութի նահանգի Էլ-Խուսուս վիճակում, Նեղոսի արևելյան ափին, քաղաքի ներսում հայերն ունեին երկու եկեղեցի և մի վանք, որոնց անունները չի նշում[86]:

24—25. Իսկ նույն քաղաքի (Էլ-Խուսուս) դրսում կային ևս երկու եկեղեցի, որոնք դարձյալ մնացել են անանուն[87]:

26. Վերին Եգիպտոսի Բենի Սուեյֆ նահանգում գտնվող Սաֆթ Մեյդում գյուղում կար հասարակաց մի եկեղեցի պատարագի երեք սեղաններով, որոնցից կենտրոնականը պատկանում էր ղպտիներին, երկրորդը՝ մելքիթներին, իսկ երրորդն էլ՝ հայերին: Հայերի պատարագի սեղանը նվիրված էր **Ս. Գևորգ** զորավարի անվան[88]:

27. Վերին Եգիպտոսում, Նեղոսի արևմտյան ափին, Բուհեյրայի և Ֆեյումի միջև, Վադի Հաբիբ կամ Վադի Նաթրուն կոչված անապատում եղել է հայկական մի վանք, որ հիշված է միայն Մաքրիզիի կողմից երբ այն արդեն ավերակ էր[89]:

28. Խոսելով Ֆեյում քաղաքի մասին, Աբու Սալիհը գրել է, որ մելքիթները մի եկեղեցի ունեին Հաբեթ Էլ-Էրմենում (Հայկական թաղամասում)[90], որից Մըսրլյանն ենթադրում է, որ թերևս հայերն էլ մի եկեղեցի պետք է ունենային, քանի որ Հայկական թաղամասի առկայությունը ցույց է տալիս, որ այդ կարևոր բնակավայրում եղել է հայկական մի հոծ համայնք[91]:

---

83 **Ղ. Ալիշան,** Աբուսահլ հայ, Պատմութիւն եկեղեցեաց..., էջ 55:

84 **Գ. Մըսրլեան,** նշված աշխ., էջ 168—9:

85 Նույն տեղում, էջ 168—9:

86 Նույն տեղում, էջ 170: The Churches & Monasteries of Egypt..., p. 249.

87 Նույն տեղում (երկու գրքերում էլ):

88 **Գ. Մըսրլեան.** նշված աշխատ., էջ 170: The Churches..., p. 188.

89 **Գ. Մըսրլեան,** նշված աշխատ., էջ 170:

90 The Churches & Monasteries of Egypt..., p. 205.

91 **Գ. Մըսրլեան,** նշված աշխատ., էջ 171:

29. Ասիութ քաղաքում ևս պատմիչները չեն հիշատակում հայկական որևէ եկեղեցի, սակայն Աբու Սալիհը գրում է, որ յոթ դռներից մեկը կոչվում էր Բաբ Էլ-Էրմեն (Հայոց դուռ): Սա ենթադրել է տալիս Մը ըրլյանին, որ այդ կարևոր քաղաքում հայկական համայնք և եկեղեցի է գոյություն ունեցել, ինչը որ շատ հավանական էր[92]:

30. Վերին Եգիպտոսում Սոհակ քաղաքի մոտակայքում գոյություն ուներ մի վանք, Դեյր Էլ-Աբիադ (Սպիտակ վանք) անունով (ըստ երևույթին շինաքարի գույնի պատճառով—Ն. Տ. Մ.), որ ժամանակին պատկանում էր ղպտիներին, սակայն Բեդր Էլ-Ջեմալիի օրերին այն հանձնված էր հայերին: Սա Եգիպտոսի միջնադարյան միակ հայկական վանքն է, որ իր գոյությունը պահպանել է մինչև այսօր (տեսնել նկարները և հայերեն արձանագրությունները), սակայն ներկայիս այն պատկանում է առաջվա տիրոջը՝ ղպտիներին: Եգիպտոսի հայոց առաջնորդ Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակյանն արժեքավոր երկու ուսումնասիրություն ունի այս վանքի մասին[93]: Վանքը նվիրված է ղպտի սրբերից Ամբա Շընուդայի անվան: Այս վանքի մասին գրել են նաև հետագայում Ալպոյաճյանը, Մը ըրլյանը, Գարտաշյանը, Անժել Գափոյան-Գույումճյանը և այլ բազմաթիվ պատմաբաններ և բանասերներ:

Սպիտակ վանքը ԺԱ—ԺԲ դարերում պատկանել է հայերին հետևյալ երկու կարևոր փաստերի պատճառով, որ առաջ է քաշել Գուշակյան Սը ըբազանը: Այս վերջինս, որ հանդիսացել է Եգիպտահայոց թեմի առաջնորդը 1914—32 թթ., 1920-ական թվականներին այցելել է այս վանքն և հայտնաբերել, որ վանքի եկեղեցու «խորանի կամարին նկարազարդությունը հայկական է բոլորովին»: Եգիպտահայ միջնադարյան նկարիչն այնտեղ պատին վրա գրել է երեք արձանագրություն, որոնք հետևյալներն են.

1.

+ԹԵՈԴՈՐՈՍ
ՆԿԱՐԻՉ ԵՒ ԳՐԻՉ
Ի ԳԱՒԱՌԷՆ
ՔԷՄՆՈՅ. ՄԵՐՁ
Ի ԿԱՄՈՒՐՋՆ
ՇՆՋԵՈՅ: Ի Գ-
ԵՂՋԷ ՈՐ ԿՈՉԻ
ՄԱՒԹԼԼԷ: և ՀԱ-
ՅՐ ԻՄ ՔՐԻՍՏԱՓ-

2.

ՏԱ-
ՐԱԾՈՂՆ
ԼՈՅՍ Ի ՄԵ-
ՏԱՂՍ ՔՐԵԱԿԱՆՍ
ՈՂՈՐՄԵՍՑԻ ՔՍ
ԽԱՉԱ-
ՏՐՈՅ.

---

[92] Նույն տեղում, էջ 170:

[93] Թ(որգոմ) Եպս. Գ(ուշակեան), Եգիպտոսի հայոց հին և արդի եկեղեցիները..., Գահիրէ, 1927, էջ 16—22 («Ճերմակ վանք»): Տեսնել նաև Թէոդիկի «Ամենուն տարեցոյցը» (ԺԷ տարի, Կ. Պոլիս, 1923, էջ 374—380, «Հայերէն արձանագրութիւններ Վերին Եգիպտոսի ղպտի վանքի մը մէջ», (Թորգոմ Արքեպսկ.):

Թորգոմ սրբազանի տված արձանագրության մեջ մի քանի մանր փոփոխություններ ենք կատարել, հիմք ունենալով Անժել Գափոյան-Գույումճյանի գրքում տրված գեղեցիկ լուսանկարների ճշգրիտ գրությունները (Angèle Kapoïan, Kouymjian, L'Égypte vue par des Arméniens, Paris, 1988, Planches I, II & III, photos Basile Psiroukis).

ՈՐ ՔԱՐԳՈՐԾ. ԱԾ ՆՄԱ ՈՂՈՐՄԵՍՑԻ և ՁԵԶ և ՄԵԶ ԱՅՑ ԱՐԱՍՑԷ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅԻՈՑՍ ՈՐՔ ԵՄՔՍ Ի ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՅԵԳԻՊՏՈՍՍԻ. Ի ՀԱՅ-ՐԱՊԵՏՈՒԹԵԱՆՆ ՏՆ ԳՐԻԳՈՐԻ ՔԻԵՐՈՐ-ԴԻՈՅ ԳՐԻԳՈՐԻՍԻ ՈՐ ՏՐ ՎԱՀՐԱՄՆ ԿՈՉԻ:	3. ՔՍ ՈՂՈՐՄԵՍՑԻ ՍԱՐ-ԳՍԻ . . . . . Ի ՄԵ-ՏԱՂՍ.

Վերոհիշյալ երեք արձանագրությունները տրված են Թորգոմ Սրբազանի կողմից: Կա նաև մի 4-րդ արձանագրությունը գրված Հովհաննես ավետարանիչի նկարի կողքին, որ հետևյալն է.

«Ի ՍԿԶԲԱՆԷ ԷՐ ԲԱՆՆ և ԲԱՆՆ ԷՐ ԱՌ ԱԾ և ...»

(առաջին չորս բառերը կրկնված են: Սույնը տեսնել վերոհիշյալ գրքի 2-րդ պատկերում):

Թորգոմ Սրբազանը գրում է, որ սույն Սպիտակ վանքը Դ դարի ղպտի շինություն է, որ Ֆաթիմյան հարստության ժամանակ պատկանել է հայերին: Այս կառույցը ոչ մի նմանություն չունի բուն հայկական վանքերին: Թեոդորոս նկարիչն ու արձանագրությունների գրիչն եկած է Կիլիկիայի Քեսուն քաղաքից: Նրա հայրը՝ Քրիստափորը երևի վանքի նորոգող քարագործներից է եղած: Գալով Խաչատուրին և Սարգիսին, Գուշակյանը գրում է, որ «հայտնի է, թե քարահանգերու մեջ տաժանակիր աշխատությանց մատնված հայեր էին, որոնք որևէ կերպով նպաստեր են տաճարին պայծառության կամ նորոգության: Այս ևս ապացույց մը չէ՞ արդյոք հաստատելու համար սրբավայրիս հայկական հանգամանքը՝ գեթ այս թվականեն»[94]:

Գուշակյանը շատ իրավամբ գտնում է, որ Թեոդորոս հայ նկարիչը իրավունք ուներ եկեղեցու որմնազարդումը կատարել մեսրոպյան տառերով և հայկական արձանագրություններով, քանի որ այն պատկանում էր հայերին: Եթե այդ վանքը հայերին չպատկաներ, ոչ մի հայկական արձանագրություն չէր կարող մուտք գործել այդ ղպտի եկեղեցում: Գտնում ենք, որ իրոք արդարացի և ճշմարտացի է այս փաստարկումը: Բացի այդ Աբու Սալիհը գրում է, որ Եգիպտոսի քրիստոնյա վեզիր Վահրամ Պահլավունին, Կահիրեից փախչելուց հետո, ապաստանել է Վերին Եգիպտոսի Սպիտակ վանքում, որտեղ հոգևորական է դարձել և ապրել որոշ ժամանակ, որից հետո նա կրկին վերադարձել է Կահիրե և ապրել խալիֆայի պալատում, որտեղ և մահացել է հետագայում: Այս պարագան ևս պարզ կերպով ցույց է տալիս, որ Սպիտակ վանքը ԺԱ—ԺԲ դարերում հայկական է եղել, որովհետև «արյամբ և հոգով հայ և հայադավան այս իշխանը պիտի չկրնար երբեք ոչ հայկական վանք մը ընտրել իրեն իբրև հոգեկան մխիթարության մենարան»[95]:

---

[94] **Թէոդիկ**, Ամենուն տարեցոյցը, էջ 379:

[95] **Թ. Գուշակեան**, Եգիպտոսի հայոց հին և արդի եկեղեցիները. Կահիրե, 1927, էջ 18:

Աբու Սալիհից, Մաքրիզիից և Մըսրլյանից առնելով վերոհիշյալ եգիպտահայ երեսուն վանքերն ու եկեղեցիները, բահասերներից ոմանք գտնում են, որ հայերը դեռ ավելին են ունեցել: Այսպես Մըսրլյանը գրում է, որ «ըստ հայ և օտար ժամանակագիրների վկայության, Ֆաթիմյանների շրջանին (969—1171) հայերը Եգիպտոսի մեջ ունեցած են մինչև 35 վանքեր և եկեղեցիներ, որոնց անանշան մեկ մասը միայն հանվանե հիշատակված կգտնենք պատմագիրքերու մեջ»[96]:

Հետագայում սակայն Եգիպտոսի եկեղեցիներից մեծ մասը քանդվեցին և ավերակների վերածվեցին 1322 թ.[97]: Այս ժամանակ հիմնահատակ կործանվեցին նաև հայկական եկեղեցիների մեծ մասը, մնացյալն էլ անցնելով դպտիների ձեռքը:

Վերոհիշյալ երեսուն աղոթավայրերի և սրբատեղիների թվարկումը պարզ և հստակ կերպով ցույց է տալիս, որ առհասարակ միջնադարյան Եգիպտոսում, և մասնավորապես ԺԱ—ԺԲ դարերում հայկական համայնքներն որտե՞ղ էին սփռված Նեղոս գետի երկայնության և որքա՞ն հոծ էին դրանք: Այսպես, պարզվում է, որ հայերի մեծ մասը ապրում էր Կահիրեում, որտեղ ունեին բազմաթիվ եկեղեցիներ այն թաղերում և թաղամասերում (Այգեստան—Էլ-Բասաթին, Հարեթ Էլ-Զուելա, Զուհրի, Դեյր Էլ-Խանդաք), ուր նրանք ապրում էին քով-քովի: Բացի մայրաքաղաքից հայկական համայնքներ գոյություն ունեին Թուրայում, Իթֆիհում, Քալուսանայում, Շինարայում, Էլ-Խուսուսում, Սաֆթ Մեյդումում, Ֆեյումում, Ասիութում, Վադի Նաթրունում և Սոհակում: Բացի այդ քաղաքներից և գյուղերից շատ հավանաբար հայեր կային նաև այլ բնակավայրերում (Աղեքսանդրիա և այլն), որոնց մասին Աբու Սալիհն երևի գրած է եղել իր ձեռագրի կորած առաջին 22 թերթերում: Անշուշտ հայերը ցրված են եղել Եգիպտոսի այլ բնակավայրերում նաև, որտեղ չէին եղել հայկական աղոթավայրեր, գաղթօջախի նոր լինելու հետևանքով:

Պետք է նշել, որ գործող այս վանքերն ու եկեղեցիները ոչ միայն աղոթատեղիներ են եղած, սակայն իրականում հանդիսացել են ազգային ինքնագիտակցությունը պահպանող հիմնարկներ, հայության պահպանության վառ օջախներ, որտեղ գոյություն են ունեցել հայկական դպրոցներ և որտեղ, հատկապես վանքերում, ծաղկել է հայերեն գիրն ու գրականությունը, ինչպես նշում են աղբյուրները:

Շարունակելի)

---

[96] **Գ. Մըսրլեան**, նշված աշխատությունը, էջ 147:

[97] Նույն տեղում, էջ 140: